ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, որը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արբաթ գյուղի 4-րդ փողոց 48 շենք հասցեում, քիմիայի (5 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ) , ինֆորմատիկայի (2 դասաժամ) , ԹԳՀԳ (5 դասաժամ) , տեխնոլոգիայի (4-ական դասաժամ), երաժշտության (9 դասաժամ) , ՆԶՊ -ի (5 դասաժամ) և դասվարի (15 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվելու է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4),Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2025 թվականի հունվարի 10-ից մինչև հունվարի 23-ը ներառյալ, ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 14^{00}-ն; բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 27 -ին, ժամը 14^{00}-ին, Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն ՝ Արարատի մարզ Մասիս համայնք գ .Արբաթի 4-րդ փողոց 48 շենք :

Տեղեկությունների համար զանգահարել 093-51-01-90: